

վր, որ մեր սրբազն հայրը մեզ քերավ ի մասին մեր Հայրենիքի հսկայաբայլ հառաջդիմուրյանց՝ շինարարուրյան, հարտարավեստի ծավալման և մշակուրային վերելի ուղիներով:

Հուսացյալ սրտով, խոնարհարար կիսնդենենք Ձեր Վեհափառուրենեն, որ նեա նեա այսորիկ հանիք մեզ շնորհելու նոր առիքներ՝ այցելելու մեր Մայր Երկիրը և Սուրբ Էմիլիածինը, որոնք մեր կյանքի մշտանորոգ աղբյուրները կմնան հավիայան:

Ընդունեցեմ, Վեհափառ Տեր, մեր զերմա-

զին բարեմաղբուրյունները Զեր առողջության և արեջառուրյան, ինչպես և Ձերդ Սրբուրյան եկեղեցանվեր ու հայրենասեր զործոց փառակոր հաջողուրյան համար:

Մատչելով ի համբույր Ձերդ Սուրբ Օծուրյան օրինաբաշխ Աջոյն, մեամբ Ձերդ հավատարիմ և հայրենաբաղձ որդիի՝

**Առաջնորդ՝**

ՎԱԶԳԵՆ ԵԳԻՒԿՈՊՈՍ

(Թեմական խորհրդի անդամների  
ստորագրուրյունները)

Բայրել, 6 հունիս 1952

### ԿՈՄՊՈԶԻՑՈՒՄ ԱՐՍՈՒ ԽԱԶԱՏՐՅԱՆԸ ՍՈՖԻԱ.ՑՈՒՄ

Մայիսի 30-ին Սոֆիա ժամանեցին սովետական կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանը և Արգավիդի Ֆիլիպինիոն, ներկա գրանցվելու համար բոված երաժշտական ստեղծագործության ստուգատեսին:

Հունիս 4-ին ընկ. ընկ. Դ. Շիրինյանն, Վ. Մումբյանն, Կ. Կարապետյանն, Բ. Թյուֆենկյանն և Գ. Պարավյանն բաղկացած պատվիրակություն մը, բոված այս «Երեվան» հառաջդիմական միության կետունական վարչության անոնուվ այցելեց Արամ Խաչատրյանին և բոված այս միության կողմին բարի գաղուստ մաղթեց հայ ժողովրդի տաղանդավոր զավակին:

Պատասխանելով թերթիս խմբագիր ընկ. Բ. Թյուֆենկյանի հարցումներուն, ընկ. Ա. Խաչատրյանը հայտարարեց.

— Սովետական Հայաստանի կայցելեմ պարբերաբար Վերջին անգամ Երևան կդրունքի քանի մը ամիս առաջ: Հայաստանի մեջ կյանքն ընդհանրապես և կուտուրական կյանքը մասնավորապես կընթանան բուռն վերելքի թափով: Ենինարարությունը համաշղթիմե անօրինակ արագությամբ: Ասիկա մասնավորապես աշքի կզարնե Երևանի մեջ, ուր յուրաքանչյուր այցելությանս քաղաքն անձանաշելի ըլլալու չափ փոխած կրոննեմ: Հայկական ՍՍՌ Կառավարությունը ինձի բնակարան նվիրած է Երևանի մեջ:

Հայաստանի երաժշտական կյանքին մեջ վերջին տարիներու քնորոշ երևությն է երիտասարդ տաղանդավոր երաժշտաներու փաղանգի մը հայտնությունը, ինչպես Ալ. Հարությունյան, Արնո Բարաջանյան, էղ.

Միրգայան՝ ուրիշներ, որոնք արդին իսկ ունին կարևոր ստեղծագործություններու:

Ի՞նորպության ստեղծագործություններու մասին ընկ. Ա. Խաչատրյան բավարար:

— Ներկայիս կաշխատիմ «Սպարտակ» մեծ բակետին վրա, որ ավարտելու վրա է և որում նյութը առնված է հոռմեական կայսրության դեմ ապստամբող ստրովիներու առաջնորդ Սպարտակի կյանքին: Սույն բակետն առաջին անգամ պիտի բեմադրվի կենինգրագի մեջ նվոր Մոխսենի զեկավարությամբ: Զեռնարկած եմ նույնպես «Արմերապահակով» ֆիլմի երաժշտության ձայնագրումներն:

Բացի ասկե, կշարունակեմ ձայնագրել սովետահայ բանաստեղծ Աշոտ Գրաշիի բանաստեղծություններու շարքը, որոնք կերպվին ժողովուրդին կողմեն: Այսպիսով կուկեմ գոհացում տալ Հայաստանի ժողովուրդին կողմեն հայունված բաղձանքին: Տարիներ առաջ, երբ հայ ժողովուրդական ստեղծագործությունները ուսումնասիրելու համար կշրջին Հայաստանի դյուլերը, ժողովուրդը շերմագին կերպով և ծաղկիներու տարափով ընդունեց զիս, արցունքներ խլելով իմ աշքերես: Հայ ժողովուրդը այդ առթիվ փափագ հայտնեց, որ նոր երգեր գրեմ իրեն, ու ես կիատարեմ անոր կողմեն զրված սույն նվիրական պարտականությունը:

Մասնավոր հաճույքով կերպվին «Գարուն Երևան», սիրուն Երևան» և հայ ժողովուրդի մեծ զավակ Անաստաս Միկոյանի ձոն ված կրգերը:

Կոմպոզիտոր Ա. Խաչատրյան ծնած է 6 հունիս 1904, Թքիլիսիի մեջ: Իր երաժշտական կրթությունը ստացած է Մոսկվայի մեջ ականավոր երաժշտագետ Հանգուցյալ պրոֆ. Միհակովսկիի մոտ, կոնսերվատորիայի դասընթացքը գերազանցորեն ավարտելով 1934-ին, որպես լառուրեատ: Այսպիսով իր

անունը արձանադրված է կոնսերվատորիայի մարմարի տախտակին վրա ուսկյա տառերով: Ըսկե Արամ Խաչատրյան մոտեն Հետու քրթությավ բովզարահայության կյանքով և հրաժեշտի պահուն Հանձնարարեց իր չեղու ողջունները հաղորդել անոր, «Երևան» թերթին միջոցով:

(«ԵՐԵՎԱՆ», Սովիա)

## ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԸ ՀԱՅՉԱԽԱՉ Է ՏԱԼԻՍ ՀԱՅԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Վերջերս, Հարեշ Կայսեր բարձր կարգադրությամբ, երուսաղեմի Հարեշ տեսչությունը ունեցավ իր եպիսկոպոս տեսուչը Հանձին գերաշնորհ տեր Ֆիլիփիոս սրբազն եպիսկոպոսի:

Սուրբ Աթոռույս գերաշնորհ տեղապահ սրբազնը օգտվելով առիթին և մանավաճան նկատի ունենալով այն լայն բարյացակամությունը, որ Հարեշ Վեհափառ Կայսրը ցույց կուտա իր եթերի հայազդի հպատակներուն, գեղեցիկ դադարարը ունեցավ Ա. Զատկի առթիվ պարգևատրել հաքեզոց գերաշնորհ տեսուչ սրբազնը պահակեռով մը, իսկ այս օրերս երուսաղեմ գտնվող Հարեշ Կայսեր պատվիրակ Հոգեշնորհ վարդապետը՝ վարդապետական լանջախաչով մը:

Սուրբ նվերները 22 ապրիլին հանձնվեցան իրենց գերաշնորհ տեղապահ սրբազն Հոր կողմն երբ անոնք Ա. Զատկի շնորհավորության Համար եկած էին Պատրիարքարան:

Գերաշնորհ տեր Ֆիլիփիոս եպիսկոպոսը և Հոգեշնորհ կայսերական պատվիրակ Հայրը այս անակնկալ նվերներին կարի զգած, ված, հուզումով և սրտառուց խոսքերով արտահայտեցին իրենց սերն ու հարգանքը Հայ ժողովուրդին և մասնավորապես Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին նկատմամբ և խոստացան Վեհափառ Կայսեր մասնավոր ուշադրության հանձնել այսօրվան այս գեպը մասնավորապես և ընդհանրապես մեր Պատրիարքության բարյացակամ դիրքը իրենց նվաճմամբ, որպես «ամենեն անկեղծ բարեկամներ, հայրեր և Հովանուպողներ երուսաղեմի հարեշ համայնքին»:

(«Հայաստանյայց Եկեղեցի»,  
օգոստոս, 1952 թ.)

